ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ապրիլի 4-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն վրդ. Միրզախանյանը, թեմի գործերի կառավարիչ Աշոտ Նաջարյանը և Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան պարոն Գեորգի Խոսրոևը այցելեցին Վրաստանի նախագահ պարոն Էդուարդ Շևարդնաձեին:

Հանդիպման ընթացքում պարոն Շևարդնաձեն նշեց, որ տեղյակ է Վիրահայոց թեմում ծավալված աշխատանքների մասին և ուրախ, որ Վիրահայոց թեմը սերտորեն համագործակցում է Վրաց Եկեղեցու հետ: Նախագահը վստահություն հայտնեց, որ հոգեշնորհ առաջնորդն այսուհետ ևս կշարունակի իր արգասաբեր առաքելությունը. «Հուրախություն մեզ՝ վրաց և հայ ժողովուրդների բարեկամությունը շարունակվում է: Հուսով ենք, որ մեր ապագա սերունդները ևս կշարունակեն այս բարի ավանդույթը, քանզի մեր հարաբերություններն ընթանալու այլ ճանապարհ չունեն»:

Պարոն նախագահը տեղեկացրեց նաև, որ Վրաստանի խորհրդարանը մինչ այս տարվա ավարտ պատրաստվում է ընդունել կրոնի ազատության մասին օրենք, որն իրավաբանորեն կկարգավորի Եկեղեցի և պետություն հարաբերությունները:

Հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Միրզախանյանը, ի հավաստումն պարոն նախագահի խոսքերի, շեշտադրեց, որ Վիրահայոց թեմը հնարավորն ի գործ կդնի՝ վրաց և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման և Վրաստանի պետության բարգավաճման համար:

Ի հիշատակ Վրաստանի նախագահի հետ առաջին հանդիպման՝ Վիրահայոց թեմի առաջնորդը մի սրբանկար նվիրեց Էդուարդ Շևարդնաձեին:

Հանդիպումն անցավ ջերմ և բարեկամական մթնոլորտում:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ
ՄԱՄՍԼՈ ԴԻՎԱՆ